

XVII ԴԱՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՐԱՐԸ

Ռ. Ա. ԻՇԽԱՆՅԱՆ

Աշխարհաբարի, այսինքն՝ նոր գրական հայերենի առանձին տարրեր գտնում ենք XVII դ. առաջ ստեղծված գրավոր հուշարձաններում, սակայն աշխարհաբար ամբողջական բնագրերը, երկերը սկիզբ են առնում XVII դ. կեսերից: Բանասիրությանը առայժմ հայտնի գրավոր հուշարձանները՝ հիմք են տալիս մտածելու, որ հայոց լեզվի այն որակը, որ կոչվում է նոր գրական ճայեթեն, ճայոց երբորդ գրական լեզու կամ աշխարհաբար իբրև հաղորդակցության միջոց սկսել է օգտագործվել XVII դ. կեսերից, մանավանդ դարի երկրորդ կեսում:

Սակայն այդ օգտագործումը լայն շրջանակ չի ընդգրկել, իբրև հայ գրական լեզու իշխող դիրքում էր մնում գրաբարը, որի նշանակությունը շարունակեց պահպանվել մինչև XIX դ. կեսերը: Մոտ երկու հարյուրամյակ տևած այդ ժամանակաշրջանում հայոց գեղարվեստական, կրոնա-եկեղեցական, գիտական, ուսումնական գրականության մեջ գերիշխում էր գրաբարը, բայց անկատարեն, քայլ առ քայլ իր դիրքերը զիջելով աշխարհաբարին, մինչև որ XIX դ. երկրորդ կեսից սկսած՝ գրեթե լիովին թողեց այդ դիրքերը:

Վաղ աշխարհաբար մենք անվանում ենք գլխավորապես XVII դ. երկրորդ կեսում գործածված նոր գրական հայերենը: Այդ շրջանից պահպանված աշխարհաբար գրքերը առևտրա-թվաբանական, մասամբ հաշվապահական բնույթ ունեն, թեև կան նաև կրոնական, ուղեգրական և այլ երկեր: Այդ շրջանի նոր գուսանական (աշուղական) ստեղծագործության մեջ էլ բարբառով հորինված տաղերի կողքին կան նաև հատուկենտ աշխարհաբար երգեր:

Այժմ մեզ հետաքրքրողը XVII դ. գրավոր գործածված աշխարհաբարն է՝ բուն իմաստով հայ նոր գրական լեզուն: Այդ լեզվի վաղ նմուշները ներկայացնող երկերից կարելի է հիշատակել Զաքարիա Աղուվեցու Ուղեգրությունը, Մաշտոցյան մատենադարանում պահվող Արհեստ թվական է սայն թվաբանական-վաճառականական ձեռնարկը², 1675-ին Մարսելում տպագրված Ար-

¹ Աշխարհաբար որոշ հուշարձաններ տարբեր բանասերներ համարել են ավելի վաղ շրջանի երկեր, սակայն լուրջ քննությունը ցույց է տվել, որ բոլոր նման վերագրումները թյուրիմացության արդյունք են եղել, և այդ բնագրերից ոչ մեկի ստեղծման ժամանակը XVII դ. կեսերից այն կողմ չի անցնում (այդ կարգի ճշտումներ տե՛ս, օրինակ, «Սովետական գրականություն և արվեստ», 1947, № 5, էջ 96—99, «Բանբեր Երևանի համալսարանի», 1971, № 1, էջ 63):

² Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. № 8716 (հրապարակված է Գ. Պետրոսյանի «Մաթեմատիկական Հայաստանում հին և միջին դարերում», Երևան, 1959): Գրչագիրն անթվակիր է. ըստ Մատենադարանի «Ցուցակ ձեռագրացի» (հ. Բ, էջ 799) այն XVII դ. ընդօրինակություն է: Կարծիք է հայտնվել, որ ձեռնարկը ստեղծվել է XV կամ XVI դդ. (Գ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 220): Դրան հիմք է ծառայել գլխավորապես այն, որ բնագրում գործած-

հետ համարողութեան» նույնպես թվաբանական-վաճառականական ձեռնարկը, Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցու «Պարզաբանութիւն հոգեմտագ սաղմոսացն» գիրքը՝ հրատարակված Վենետիկում, 1687-ին: XVII դարից են նաև Ղուկաս Վանանդեցու «Գանձ շափոյ, կշռոյ, թուոյ և դրամից բոլոր աշխարհի» վաճառականական ձեռնարկը³, տպված 1699-ին Ամստերդամում, ինչպես և Կոստանդին Զուղայեցու թվաբանական-հաշվապահական խնդրագիրքը՝ դրված Ն. Զուղայում 1687-ին⁴, սակայն սրանց աշխարհաբարն ունենալով XVII դ. նոր գրական հայերենի մի շարք հատկանիշները, վերը հիշվածներին համեմատ ավելի տարբերաց է, գլխավորապես ավելի շատ հագեցված արևելահայ տարրերով:

XVII դ. աշխարհաբարի մի քանի գլխավոր հատկանիշները ցույց տալու համար իբրև նմուշ վերցրել ենք «Արհեստ համարողութեան» գիրքը, որը մեր տարիների ուսումնասիրության առարկան է եղել: Դա թվաբանության մի փոքրիկ ձեռնարկ է⁵, նախատեսված վաճառականների համար, տպագրվել է Ս. էջմիածնի և Ս. Սարգսի» անվան նշանավոր հայկական տպարանում, որն այն ժամանակ հաստատված էր Մարսելում: Նախապես ծրագրված է եղել այդ թվաբանական բնագիրը տպագրել նույն 1675-ին Մարսելում լույս տեսած «Գիրդ վայելու և հարկաւոր» ժողովածուի կազմում, իբրև նրա վերջին մասը, բայց հետո հրատարակիչները որոշել են «Արհեստը» տպագրել իբրև առանձին գրքույկ:

«Արհեստի» տիտղոսաթերթից և առաջաբանից իմանում ենք, որ այն թարգմանություն է («թարգմանեալ ի պէտս հայկադունեաց և մանավանդ վաճառականաց»), սակայն գրքում ոչ մի խոսք չկա, թե թարգմանությունը ինչ լեզվից է կատարված⁶:

Գրքի թե՛ տիտղոսաթերթը, թե՛ առաջաբանը և՛ թե հիշատակարանը ազդարարում են, որ այն տպագրվել է հայ վաճառականների համար⁷:

ված է միլիոն բառը և աւ-ի ու օ-ի զուգահեռ գրություն կա: Իրականում այս փաստարկները առավելագույնը կարող են ցույց տալ, որ երկը գրվել է XII դ. հետո (միլիոն բառը թվաբանության մեջ սկսել է գործածվել XIV դ., իսկ հիշյալ զուգահեռ գրությունը հայերեն ձեռագրերում առկա է XIII դ.): Այս բնագրի աշխարհաբարը իր բնույթով, ինչպես և նրանում եղած թվաբանական-վաճառականական խնդիրների նյութը միանգամայն հարազատ են XVII դ. խնդրագրերին, հաճախ նույնական են նրանց հետ, և մեզ համար տարակույս չկա, որ այս բնագիրը ևս ստեղծվել է XVII դ. երկրորդ կեսում:

³ Մի հազվագյուտ օրինակը պահվում է Մատենադարանում. հնատիպերի հավաքածու № 1572:

⁴ Մատենադարան, ձեռ. № 8443:

⁵ Չափսն է 6,8×11 սմ, 151 էջ: Այս գրքի մի հազվագյուտ օրինակը պահվում է Մատենադարանում (հն. № 12):

⁶ Կարծիք է հայտնվել, որ «Արհեստը» թարգմանություն է իտալերենից (Ա. Ալպոյաճյան, Պատմութիւն հայ գպրոցի, հ. Ա, Կահիրե, 1947, էջ 417—418): Ըստ նորագույն կարծիքի՝ գիրքը լատիներեն մի ձեռնարկի թարգմանությունն է («Սովետական Հայաստան», 1969, № 170):

⁷ «Տեսանելով զհարկաւորութիւն մերազնեայց վաճառականաց վասն կատարելապէս ոչ գիտելոյ զարհեստն համարողութեան, վայելու վարկաք զգիրդս զայս թարգմանել ի մերս բարբառ» (առաջաբանից), «ի վայելումն հանուրց հայկադունեաց վաճառականաց» (հիշատակարանից):

Գրքում թարգմանչի անունը չի նշված. ենթադրել են, թե թարգմանողը Հովհաննես Հովով Կոստանդնուպոլսեցին է կամ Ոսկան Երևանցին, սակայն այդ ենթադրությունները հաստատող որևէ փաստ չկա՞:

Գրքի տիտղոսաթերթը, առաջարանը և հիշատակարանը գրաբար են, իսկ բուն ձեռնարկի ամբողջ բնագիրը՝ աշխարհաբար:

ԱՅՐՀԵՍՏ ՀԱՄԱՐՈՂՈՒԹՅԱՆՐՁ առաջմ բանասիրությունը հայտնի հնատիպ աշխարհաբար գրքերից ամենահինն է՝ առաջին աշխարհաբար տպագիր գիրքը: Չնայած դրան, գիրքը վրիպել է հայոց լեզվի պատմություն գրող բուլղոհ հեղինակների (Գ. Վանցյան, Հ. Աճառյան, Գ. Սևակ, Ս. Ղազարյան և ուրիշներ) ուշադրությունից. աշխարհաբար առաջին տպագիր գիրք է համարվել և որպես այդպիսին լեզվական քննության ենթարկվել Հովհ. Հովովի վերահիշյալ «Պարզաբանությունը»՝ լույս տեսած «ԱՅՐՀԵՍՏԻ» 12 տարի հետո:

Ստորև բերում ենք «ԱՅՐՀԵՍՏԻ» մի հատված նրա լեզվի մասին ընդհանուր պատկերացում տալու համար՝ «Մին մարդ մի մառչիլ կուզէ տայ զառապախանէն և կուզէ իմանայ, թէ իւր փողն որչափ թուման և որչափ դիան կանէ: Զառապախանի քաշումն վեց հարիւր մսխալն հարիւր մառչիլ է. մին մառչիլն քանով որ կու պարշի, դիան կու շինէ և էս մին մառչիլի գնովս իւր բովանդակ փողն կու բազմացնէ: Ցետո բազմացուցած թվի աջ կողմէն չորս գիր կու կրտրէ. ինչ-որ ձախ կողմն կու մնայ՝ թուման է, ինչ որ աջ կողմն կու մնայ՝ դիան է: Եւ թէ աւելի մսխալ մնայ, հարիւր մառչիլի գինն դիան կու շինէ և այն աւելի մսխալովն կու բազմացնէ և վեց հարիւրովն կու բաժանէ և այսպէս կիմանայ աւելի մսխալների գինն, ինչպէս էս օրինակումս. ունիմք՝ 2515 մառչիլ: Մին մառչիլն 675 դիանով պարշեցանք: էս գնովս զբովանդակ մառչիլն կու բազմացնենք և չորս գիր աջ կողմէն կու կտրենք, և կու լինի բովանդակ մառչիլի գինն՝ հարիւր եօթ անասուն և վեց թուման. հինկ հազար հարիւր և քսան դիան, և ոչինչ չի աւելանար» (134—135):

«ԱՅՐՀԵՍՏԻ» լեզվի քննությունը կատարելու համար փորձել ենք դիմել խոսքը լեզվական բաղադրիչներով բնութագրելու միջոցին: Ընտրել ենք 20 բաղադրիչներ, որոնք պայմանականորեն անվանում ենք գլխավոր, ըստ այդ բաղադրիչների ներկայացրել ենք «ԱՅՐՀԵՍՏԻ» լեզվի 20 հատկանիշներ:

Այդ բաղադրիչներն են. 1) մի շարք բնորոշ բառաձևերի ընտրությունն ու օգտագործումը (մի՛ն-մեկ, էս-այս և այլն), 2) բարբառային բառերի օգտագործումը, 3) մի քանի դերանունների (նո՛րա, նո՛քա և այլն) և վե՛րա կապի գրաբարյան ձևերի օգտագործումը, 4) գոյականների հոգնակիի կազմությունը, 5) գրաբարյան հոլովաձևերի գործածությունը, 6) հոգնակի սեռական-տրական հոլովի կազմության դեպքերը, 7) անորոշ դերբայի սեռական-տրական հոլովի կազմության դեպքերը, 8) ռւմ հոլովիչով ներգոյականի գործածությունը, 9) բացառական հոլովի կազմությունը, 10) ն հոդի գործածության երեք բնորոշ դեպքերը, 11) Վ բայամասնիկ ունեցող բայաձևերի գործածությունը,

⁸ Մասնավորապես չի հաստատվում Հովհաննես Հովովին թարգմանիչ համարող ենթադրությունը (որ պատկանում է Գ. Զարհանալյանին, տե՛ս նրա «Հայկական մատենագիտութիւնը», Վենետիկ, 1883, էջ 70), քանի որ ասպարեզում է այս հեղինակի գրչին պատկանող «Պարզաբանութիւն հոգնուազ սաղմոսացն» աշխարհաբար բնագիրը, որի լեզվաոճական մի շարք հատկանիշներ ցույց են տալիս, որ նրա հեղինակը չի կարող լինել «ԱՅՐՀԵՍՏԻ» թարգմանիչը:

⁹ «ԱՅՐՀԵՍՏԻ» բերված այս և հետագա քաղվածքներում նույնությամբ պահպանված է բնագրի ուղղագրությունը, մասամբ ժամանակակից են դարձված կետադրությունն ու մեծատառերի գրությունը (քաղվածքների վերջում տրվում են «ԱՅՐՀԵՍՏԻ» համապատասխան էջերը):

12) բայերի ներկա ժամանակի կազմությունը, 13) դիմավոր բայերի հոգնակի առաջին դեմքի զուգահեռ մֆ և նֆ վերջույթների առկայությունը (դենմֆ-դեննֆ), 14) բայերի եզակի երրորդ դեմքի է և ի վերջույթների գործածությունը (գրե-գրի), 15) էական բայի եզակի առաջին դեմքի է ձևի մենաշնորհը, 16) բայերի վաղակատար ժամանակի ձևերը, 17) բայերի ներկա ժամանակի ժխտական ձևերը, 18) պիտիմ դիմավոր բայի և անորոշ դերբայի հատկանշական կապակցությունների առկայությունը («պիտինք գիտենալ»), 19) պիտի բառի և հարակատար դերբայի հատկանշական կապակցությունների («պիտի գրած») առկայությունը, 20) ուզել բայի դիմավոր ձևերի բարբառային բնույթի կապակցությունը դիմավոր լրացման հետ («կուզէ ծախէ»):

Ստորև ըստ այս բաղադրիչ-հատկանիշների ներկայացնում ենք «Արհեստի» լեզվական համապատասխան իրողությունները:

1) Բառօղտագործման մեջ նկատելի են ժողովրդական խոսքից եկող մի քանի բառաձևեր, որոնց հաճախակի գործածությունը որակ է ստեղծում «Արհեստի» լեզվում: Դրանցից պետք է համարել մին ձևը, որ առաջացել է մի բառի ու ն հոդի միացությունից և ավանդված է գրաբար միջնադարյան բնագրերում (լամբրոնացի, նարեկացի և այլն), բայց և նույնությամբ պահպանվել է արևելյան մի շարք բարբառներում, այդ թվում՝ արարատյան (նաև՝ Լոռու խոսվածքում), Ն. Զոռայի, Արցախի, Արևմտահայ բարբառներում չկա (կա մըն հնչյունափոխված տարբերակը): XVII դ. երկրորդ կեսին և հետագայում մին-ը աշխարհաբարյան բնագրերում գործածվում է իբրև արևելյան հիշյալ բարբառներին հարազատ, այդ բարբառներից եկող (և ոչ գրաբարյան) ձև: Մէկ ձևը (որ նույն մի-ից է առաջացել), մին-ի համեմատ սկըսել է ընկալվել (և մինչև օրս էլ ընկալվում է) իբրև առավել գրական (XVII—XVIII դդ.՝ գրաբարյան) ձև: «Արհեստում» շափազանց շատ է մին-ի գործածությունը: Օրինակ՝ «Համարողութիւնն մին արհեստ մի է, որ թիւ դրելոյ ճանապարհ կուսուցանէ» (էջ 1., աշխարհաբար բնագրի առաջին նախադասությունն է), «Մին գիր մի երբ որ առաջին տեղը կու գրվի, մենակ գինքն կու նշանակէ (3), «եներքեն մին խազ մի կու քաշենք» (5), «մին գրով կու լինի» (6), «Բայց թէ մին երկար թիւ մի հանդիպի, որ երբ որ բարդենք...» (8), «Երբ որ մին թիւ կու բարդենք...» (9), «մին կարտ լինի» (91), «Երեքի կանոնն մին ճանապարհ մի է, որ երեք գիտացած թվով մին ուրիշ չի գիտացած թիւ գտնել կու ուսուցանէ» (106), «մին ամսումն» (112), «մին մարդ» (121, 135) և այլն: Նշենք, որ արևմտահայ խոսքին հատուկ մը կամ մըն ձևերը չի ունենում բացակայում են «Արհեստի» լեզվում:

Մին ձևի՝ գրքի սկզբում տեղ գտած «մենաշնորհը» բնագրի շարունակություն մեջ աստիճանաբար վերանում է, և սկսում է նույն իմաստով մին-ի հետ հանդես գալ նաև նրա մէկ համանիշը, ինչպես՝ «Զերայ թէ որ վերևի երկու շարն մէկ տեղ բարդենք» (15), «Մէկ թիւ մի մէկ ուրիշ թվով պիտինք փորձել, թե շիտակ եմք բազմացուցեր» (42), «ապա մէկ թիւ մի կու բարդենք քշտի երեքին հետ» (87) և այլն:

Թվաբանական կանոնները բացատրելիս մերթ մին, մերթ մէկ ձևերն են գործածվում, ինչպես՝ «Հանելն էն է, որ մին պզտիկ թիւ մի ի մեծ թվէն կամ հաւասար թիւ մի ի հաւասար թվէն դուրս քաշել կուսուցանէ» (17), «Բազմացնելն էն է, որ մին թիւ մի մին ուրիշ թվի շափովն աւելացուցանել կուսուցանէ»

(32), բայց և՛ «Բաժանելն էն է, որ մեկ թիւ մի մէկ ուրիշ թվի շափովն կրորատեի կուսուցանէ» (51), «եւր մէկ թիւ մի բաժանել կուզեմք...» (53) և այլն:

Հնդհանուր առմամբ գերակշռում է միւս ձևը, որն, ինչպես ասացինք, հատուկ է արեւելյան մի շարք բարբառներին: Նկատենք նաև, որ մի բառաձևը (տե՛ս օրինակներում) առանձնահատուկ (միւս-ից ու մէկ-ից տարբեր) նշանակութիւն ունի (անորոշության):

Բառաձևերի գործածման մի այլ ակնառու հատկանիշ է արեւելահայ էս. էդ, էն ձևերի ու նրանցից կազմվածների առատութիւնը, ինչպես՝ «Առաջին տեղն էն է, որ աշ կողմն է: Իսկ վերջին տեղն էն է, որ ձախ կողմն է: Ինչպես էս թվումս» (2), «և էսպէս կու կատարվի բարդելն» (7), «բայց լաւն էն է, որ երբ էսպես երկար թիւ հանդիպի բաժին բաժին անենք, ամէն բաժին ջոկ ջոկ բարդենք, յետոյ էն բարդածներն մին տեղ ժողովենք» (8), «թէ որ լինի, մտքերս չի խրթվի, ինչպես թէ որ կամենամք էս երկար թիւս բաժին բաժին անել, էնպես կանենք» (9), «էս փորձելս երեք կերպիւ կու լինի» (9), «էս օրինակս կուսուցանէ» (10) և այլն: Ունենք նաև՝ էնտոնց (2), էնտուր (11), էնկից (6), էսկից (13), էստում (71) ձևերի մի շարք օգտագործումներ¹⁰:

Էս ու էն-ը և նրանցով կազմվածները նույնպես գրքի սկզբում գրեթե մե-նաշնորհ ունեն, բայց աստիճանաբար դրանց զուգահեռ հանդես են գալիս այս ու այն-ը և նրանցով կազմվածները. ինչպես՝ «բայց գրերն պիտի այնպես տեղաւորած...» (5), «բայց այս օրինակս այն թւերին է. «Այս երկուքս» (85), «Յետոյ այս բազմապատկած թիվս...» (107), «Այսպէս թէ առաջին տարի լինի...» (107), «Ապա այս եօթանասուն և չորս հարիւրով բազմացուցինք» (122), «Այսպէս կիմանայ այսչափ տրամ մառճամի գինն» (142) և այլն: Շատ դեպքերում միմյանց հարևան, նման կապակցութիւններում, նաև միևնույն նախադասութեան մեջ ունենք և՛ մեկ և՛ մյուս ձևը («Այս վերոյ դրեալ օրինակս էն թվերին է...» (75), «Ինչպէս այս հետեւեալ օրինակումս...» (77) և «Ինչպէս էս օրինակումս...» (78) և այլն):

Գերակշռում են էս ու էն-ը և նրանցով կազմվածները: Հատկապես շատ են էս-երը՝ «էս օրինակս», «էս օրինակումս» և այլն, նույնիսկ ունենք զ նախդիրով էս, ինչպես. «Մին ուրիշ ճանապարհ էլ կա հանելու, որ հեշտ է. քան զէս» (22), «Յետոյ զէս բազմացուցած թիվս վեց հարիւր դիանով կըրկին կու բազմացնեմք» (139) և այլն, թեև նույն դիրքում էս-ը գործածվում է նաև առանց զ-ի («Յետոյ էս բազմացուցած թիվը երկու հարյուրով կու բաժանեմք» (134): Ի դեպ, կա նաև զ-ով այս. «Բայց դժուար է զայս փորձս գործածելն» (50): Արեւմտահայ խոսքին հատուկ աս, ադ, ան-ը և նրանցով կազմվածները բոլորովին չկան «Արհեստում»:

Գրքի լեզվում առկա են նաև մի շարք ուրիշ բառաձևեր, որոնք բարբառից կամ ժողովրդախոսակցականից են գալիս. այդպիսին է արեւելահայ խոսքին հատուկ էլ-ը («էլ աւելի» (15), «Այս մէկս էլ կու հանեմք վերեւի մէկէն» (90), միայն մեկ-երկու դեպքում ունենք էլ-ի գրաբարյան այլ համանիշը (օրինակ՝ «Իսկ թէ յետ բաժանելուն այլ գիր չի մնայ» (77): Էլ-ը բացարձակ

¹⁰ Այստեղ և այսուհետև «Արհեստից» քաղված առանձին բառերի ու ձևերի կողքին տըրվում է նրանց գործածութեան դեպքերից միայն մեկի՝ էշը: Ուստի այդ մի էշի նշումը չի նշանակում, թե բառը կամ ձևը այդ մեկ անգամն է գործածված: Շատ դեպքերում մինչև 10 և ավելի գործածութիւններից նշված է միայն մեկը:

գերակշռությամբ բավական շատ է գործածված: Արևմտահայ ալ-ի գործածությունն ոչ մի դեպք չկա: Ժողովրդական-բարբառային բնույթի բառաձևերից կան նաև հիմնիկս («հիմնիկս թողումք» (51), «ինչ որ մինչև հիմնիկս գրեցինք» (115), կարենալ («որ հեշտ կարենայ ամէն մարդ» (15), միճակ («... կու գրւի մինակ»), իրու («էն ժուկն պիտինք զգուշանալ, որ զթվերն իրուր չի խրթեմք»): Այս բառաձևերը նույնպես գալիս են արևելահայ բարբառներից և մի ամբողջական շարք են կազմում մին-ի, էս ու էն-ի, էլ-ի հետ:

Ուշադրության արժանի է լինել (լինիլ) բայը, որ գործածված է հենց այս ձևով: Այդ բայաձևը ուշադրության ենք առնում այն պատճառով, որ հետագայում գրական արևմտահայերենին հատուկ ըլլալ ձևն «Արհեստում» լիովին բացակայում է, մյուս կողմից լինել ձևը հետագայում հատկանշական դարձավ գրական արևելահայերենին. օրինակ՝ «Յետոյ էն բարդումներն մին տեղ ժողովենք, որ հեշտ լինի...» (8), «էս փորձելս երեք կերպիւ կու լինի» (9), «թէ մին կարտ լինի» (91), «սա առանց նորա չի լինիր» (215) և այլն: 2) «Արհեստի» լեզվում առկա են բարբառներից ու ժողովրդախոսակցականից այնտեղ թափանցած մի շարք բառեր (որոնց մի մասը ուշ միջնադարի և նոր շրջանի բարբառային փոխառություններ են): Այդ բառերից մի քանիսը առավելապես հատուկ են արևելահայ բարբառներին. ինչպես՝ իմիճ («մին իբմին չի նշանակեր» (2), ժուկ (ժամանակի իմաստով՝ «էն ժուկն միաւորն կու դնեմք» (8), «էն ժուկն պիտինք զգուշանալ» (112), կուշտ կամ քուշտ (մոտ իմաստով՝ «միւս զէրօի կշտին» (85), «մին թիւ մի քշտի ըննէն փոխ կառնումք» (187): Մյուս բարբառային բառերը, ըստ երևույթին, հատուկ են եղել թե՛ արևելահայ, թե՛ արևմտահայ մի շարք բարբառների, ինչպես՝ պզտիկ («մի պզտիկ թիւ»), ջոկ-ջոկ («ամեն բաժին ջոկ-ջոկ բարդենք» (8), խազ («եներբն մին խազ կու քաշենք» (5), սաղ («սաղ թվի բարդին» (5), խառնել («մին ամսումն վեց ոսկի է խառնել» (112), պարզել («հարկի ոսկի էինք պարզել» (130), կէօրայ («ամէն մարդ իւր կարողութեան կէօրայ» (116). մայա («իւր բովանդակ մայէն» (125), ֆլան («այսինչ իմաստով՝ «ֆլանի այսչափ փողը» (116) և այլն:

Շատ է գործածված գէրայ փոխառյալ շաղկապը. ընդ որում գերակշռում է հենց այդ՝ գերայ ձևը (մոտ 40 գործածություն, էջ 15, 16, 20, 26 և այլն), բայց ունենք նաև նույնը զէրէ և զիրայ ձևերով, առաջինը տասից ավելի անգամ (էջ 97, 102, 104, 107 և այլն), երկրորդը մի քանի անգամ գործածված (էջ 12, 17, 30, 36 և այլն):

Կան նաև շափ ու կշիռ նշանակող մի շարք (հիմնականում նոր փոխառյալ) բառեր, որոնք հատուկ են եղել վաճառականների ժողովրդախոսակցական հայերենին, ինչպես՝ քուման (83), դիւր (109), տիւար (97), կարտ (97), քէրց (97), դիւան (135), լիպրայ (139), օխայ (143), դանթար (144) և այլն:

Վերը բերված բառերից հետաքրքրական են հետևյալները՝ խառնել, կէօրայ, պարզել, տիւար՝ իրենց ճ, կ, պ, տ խուլ բաղաձայններով տառադարձված (ոչ՝ խառչել, գէօրայ, բարչել կամ բարիչել, դիւար), որոնց այդ ձևերը հավանաբար միջին հայերենի կամ արևմտահայ խոսքի ազդեցությամբ են տեղ գտել «Արհեստի» լեզվում: Այդ բառերի մի մասն էլ զուտ արևելահայ լեզուներ 9—7

ձև ունի, օրինակ՝ դիտր (Ն. Զուղայի բարբառ), ֆլան (Երևանի և Ն. Զուղայի բարբառներ) և այլն:

3) «Արհեստում» պահպանվում են մի քանի դերանունների (գլխավորապես անձնական) գրաբարյան թեքված (երբեմն տարարմատ հոլովմամբ) ձևերը՝ իւր, իւրեանց, նորա, սորա, զիս, նաև նոքա հոգնակին, որոնք աշխարհաբարում գոյատևեցին մինչև XX դ. սկզբները:

Վերայ-վրայ կապի զուգահեռ ձևերից գործածված է միայն գրաբարյան վերայ-ն, որը նույնպես նոր գրական լեզվում գոյատևեց մինչև XX դ.:

4) Գոյականների հոգնակին կազմվում է եր ու ներ-ով. սուրալներն (2), գրերն (5), թվերն (5), հարիւրաւորներն (6), հազարաւորներն (7), շարերն (16), մտքերն (29), խրատներ (55), գէոցներ (69), մառչիլներն (88), բու-մաններն (90), օրինակներն (103), պահերն (88), օրերի (126), մսխալներն (141): «Արհեստում» այս հոգնակիների մի մասը շատ անգամ է գործածված (օրինակ՝ թվեր, գրեր, օրինակներ), մի մասն՝ ավելի քիչ:

Գրաբարյան ձևով (ք-ով) կազմված ուղղական հոգնակիները խորթ են «Արհեստի» լեզվին: Կան՝ տիներիք («Յետոյ այս տինարիքս էլ կու բաժանեմք ըննով» (102), փինիկեցիք, ասորիք («Փինիկեցիքն են, որ զթուական արհեստն գտուն», «արապներն և ասորիքն ի յաջէն դէպ ի ձախ կերթան, երբ որ գիր կու գրեն» (2—3), երկուք («տասն երկուք են» (21), թեև աշխարհաբարի համար երկուք ձևն արդեն քերականական եզակիի արժեք ունի): Ք-ով և իք-ով կազմված այս հոգնակիները աննշան տոկոս են կազմում եր ու ներ-ով կազմված հոգնակիների համեմատ:

5) Զուտ գրաբարյան հոլովաձևերը (գոյականական հոլովման)¹¹ նույնպես շնչին տոկոս են կազմում աշխարհաբարյան ձևերի համեմատ և «Արհեստի» լեզվում փաստորեն բացառություններ են: Ունենք՝ կերպիւ (9), շորիցս (27), շուսի (62), կտորտանցն (115), հասարակաց (116), գրելոյ (1), բաժանելոյ (63), որոնք աննկատելի են մնում աշխարհաբարյան հոլովաձևերի բազմության մեջ:

6) Հոգնակի սեռական-տրական հոլովը կազմվում է միայն ի վերջավորությամբ, որ և արևելահայ բարբառների խմբին հատուկ կազմություն է. գրերին (2), տասնաւորներին (6), հարիւրաւորներին (7), միաւորներին (8), բւերին (8), օրերի (126), մսխալներին (134) և այլն: Բոլորովին չկան արևմտահայ բարբառներին ու ժողովրդախոսակցականին հատուկ ձևերը (միաւորներու, թվերու և այլն):

7) Անորոշ դերբայի սեռական-տրական հոլովաձևերը կազմվում են աշխարհաբարյան ու թեքույթով, ինչպես հանաչելու (15), բարդելու (15), դուրս ձգելու (15), հանելու (18), բաժանելու (69), բազմացնելու (42) և այլն, գրաբարյան ոչ թեքույթով կազմված ձևերը բացառությունների արժեք ունեն (վերը բերված օրինակներում գրելոյ (1), բաժանելոյ (63):

8) Հոլովման համակարգում աչքի են զարնում արևելահայ խոսքին հատուկ ում-ով ներգոյականի ձևերը՝ միջումն (14), տակումն (18), օրինակումն (34), տողումն (33), երեսումն (50), էստում (71), թվումս (72), ամումն (112), ֆաղաֆում (117), օրումս (138), բաժանածումն (143): Հատ-

¹¹ «Զուտ գրաբարյան» ասելով հասկանում ենք աշխարհաբարին ոչ բնորոշ հոլովաձևեր և բացառում ենք այն հոլովաձևերը, որոնք բնորոշ են և՛ գրաբարին, և՛ աշխարհաբարին (օրինակ, է-ով բացառականը):

կապես շատ են գործածված տակում-ը, միջում-ը, օրինակում-ը: Կան նաև ներգոյականի իմաստ արտահայտող գրաբարյան ձևեր (ինչպես՝ «կու գրեմք ի ձախ կողմն խաչին» (12), «կու պահենք ի մախ» և այլն): Բացարձակորեն գերակշռողը ում-ով հոլովված ձևերն են:

9) Բացառականը կազմվում է գրաբարին, միջին հայերենին և արևմտահայ բարբառներին¹² հատուկ է ձևույթով, ինչպես ամենէն (7), թվերէն (9), երկուքէն (9), գրէն (11), մնացածներէս (12), թվէն (17), մեծէն (18), պատնառէն (25), գէրօէն (30), երեքէն (30), շուրսէն (30), կողմէն (33), յրենէն (35), բաժանողէն (72), վերէն (87), տասնէն (87), յուրենէն (88), կտորէն (115), օրէն (127):

Արևելահայ բարբառներին հատուկ ց (ից, ուց) ձևույթով կազմվող բացառականով երկու բառեր են ձևավորվում՝ էսկից, էնկից, որոնք թեև շատ են գործածված, բայց բացառականի է-ով ձևերի համեմատ փոքր տոկոս են կազմում:

10) Ն հոգի գործածության 3 բնորոշ հատկանիշ ենք ընտրել: Դրանք հետևյալներն են: Գործիական և ներգոյական հոլովները և հոգով գործածելը, որ սովորական է «Արհեստի» լեզվում, ինչպես՝ չափովն (12), մնացածովն (72), կանոնովն (116), փողովն (116), շուրսովն (130), վեց հարիւրովն (134), տրամեւերովն (143), միջումն (15), տակումն (19), օրինակումն (34), երեսուներն (50) և այլն: Մի հատկանիշ, որ երկար ժամանակ բնորոշ մնաց արևելահայ աշխարհարարում:

Մի քանի բառերի ուղղականը և հոգի միացմամբ ձևափոխված է, ինչպես որ հատուկ է արևելյան մի քանի բարբառների, օրինակ՝ մայայ>մայէն (125), օխայ>օխէն (140), լիպրայ>լիպրէն (140):

Տրական-սեռական հոլովաձևն ունեցող հատկացուցիչները և կապի խնդիրները գործածվում են և առանց և հոգի, և այդ հոգով, ինչպես՝ թվի տակն (53), թվի տակումն (85), թվի մէջն, գէրօի կշտին (85), խաչի տակն (89), օրերի շահն (126) և այլն, բայց և՛ գէրօին հետ (23), երեքին հետ (24), ըննին հետ (34), շուրսին դեմ (37), երեքին հետ (87), երեքին դէմադէմ (89), ժամանակին հետ (118), օրերին շահը (136) և այլն: Այսպիսի հոգավոր ձևերը, որ հատուկ են թե՛ արևելահայ, թե՛ արևմտահայ բարբառներին, ավելի ուշ մնացին գրական լեզվի միայն արևմտահայ ճյուղում:

11) Վ մասնիկով կազմված բայաձևերը (կու գրվի (3), կասվի (4), բաժանվիլ (73) և այլն) «Արհեստի» լեզվում սովորական են, որ և աշխարհաբարյան կարևոր հատկանիշ է:

12) Բայական համակարգում դրական ներկան կազմվում է միայն կու- (կ) եղանակիչի օգնությամբ՝ համադրական ձևերով¹³, ինչպես՝ կու գրվի (3), կու նշանակէ (3), կասվի (4), կու գրենք (11) կու գտնուեմք (7), կու դնենք (7), կու տեսնուեմք (8), կու տեսնուեմք (16), կու տեսնու (14), կասենք (11), կուգնենք (35), կիմանանք (44), կու ձգեմք (72), կուսնուեմք (87), կու ծախեն (141), կու բարդեմք (89), կու հանեմք (9) և այլն:

¹² Արևելյան բարբառներից Թփղիսի բարբառի է-ով բացառականի դերը «Արհեստի» լեզվում հավանաբար պետք է բացառված համարել, իսկ Ն. Զուղայի բարբառում այդ ձևի բացառականը շատ թույլ է արտահայտված:

¹³ Հասկանալի է, որ անցյալի անկատարը նույնպես համադրական է և նույն կու (կ) մասնիկով է կազմվում:

Ներկայի ձևերը «Արհեստում» բայի բոլոր դիմավոր ձևերից ամենաշատն են և բոլորը կու, կ մասնիկով ձևավորված: Չկա արևելյան բարբառներին բնորոշ վերլուծական (մասնավորապես ում մասնիկով ձևավորված անջատ բայահիմք ունեցող) ներկայի և ոչ մի նմուշ:

Թեև հետագայում նոր գրական լեզվի արևմտահայ ճյուղում իշխեց կու եղանակիչի կը ձևը և կու-ն աստիճանաբար դուրս մղվեց, բայց այս վերջինը բնորոշ լինելով արևմտահայ մի շարք բարբառների, անպայման պետք է դիտվի ոչ միայն միջին հայերենի, այլ նաև արևմտահայ խոսքի արտահայտության «Արհեստի» լեզվում (Թփղիսի բարբառում ում-ով վերլուծական ձևերին զուգահեռ գործածվող կու-ով համադրական ներկան «Արհեստի» վրա ներգործել չէր կարող, քանի որ գրքի հրատարակման շրջապատում որևէ թփղիսեցի չի եղել, իսկ եթե նույնիսկ լիներ էլ այդպիսի մեկը, ապա հատկապես նրա բարբառային ազդեցությունը դեր խաղալ չէր կարող):

Ստորև բերում ենք ներկայի ձևերի մի քանի օրինակներ «Արհեստի» խոսքային միջավայրում. «Ինչպէս էս օրինակումս կու հանենք 6 ի թվէն 9, կու մնայ 3 և կու դնեմք 3 խազի տակն, առաջի տեղն: Դարձեալ կու հանեմք 3 ի թվէն 8 կու մնայ...» (19), «էն բովանդակ ժողոված թիւն մին գրով կու գրվի» (5), «էն ժուկն երկուքէն էլ էն շափ զէրօ դուրս կու ձգեմք» (72), «էս վեցս կու բարդեմք զէրօին հետ, և կու լինի միշտ 6, և կու դնեմք 6» (88), «Բայց երբեմն կու հանդիպի, որ զփողն ժամանակին հետ կամ զժամանակն ապրանքին հետ կուզեմք իմանալ» (112), «մուշկն դտրով կու ծախեն» (141) և այլն:

13) Դիմավոր բայերի հոգնակի առաջին դեմքի գրաբարյան մի և բարբառային-ժողովրդախոսակցական նի զուգահեռ վերջույթները (մ և ն ձևույթային փոփոխակները) խառը գործածվում են՝ ինչպես ներկայի, այնպես էլ մյուս համապատասխան ժամանակաձևերում. օրինակ՝ կու գրեմք (6), կու բարդեմք (6), կու պանեմք (8), կու տեսնումք (8), դուրս կու ձգեմք (11), կու հանեմք (19), կուզեմք (53), կու բազմացնեմք (139), դնեմք (6), կամեմք (8), կա-սեմք (14) և այլն, բայց և՛ կու գրեմք (11), կու բարդեմք (9), կասեմք (11), կու գտնեմք (7), կու դնեմք (7), կու պանեմք (7), կու ձգեմք (11), կիմանեմք (17), կու հանեմք (18) և այլն:

էական բայի հոգնակի առաջին դեմքը (ներկայի) նույնպես զուգահեռ եմք և եմք ձևերով է արտահայտված, ինչպես, օրինակ՝ «Լավ եմք բարդեր» (17), բայց՝ «Շիտակ եմք բարդեր» (9):

Բացարձակ գերակշռությունը բոլոր դեպքերում մ ձևույթով կազմված գրաբարյան տարբերակներինն է:

14) Եզակի երրորդ դեմքի (ներկա և ըղձական ապառնի) բայերի զուգահեռ է և ի դիմանիշներից բացարձակ գերակշռություն ունեն առաջինները, ինչպես՝ կու նշանակէ, գնէ («Պողոսն գնէ», «Ղուկասն գնէ» և այլն (116), կանէ («Քանի շահ կանէ» (125), կուզե (125), կու ուսուցանէ (3) և այլն, շատ քիչ են ի-ով կազմված ձևերը, ինչպես՝ կու գրվի (3), կասվի (4):

Է դիմանիշով կազմված ձևերի բացարձակ գերակշռությունը արևմտահայ խոսքի (ինչպես և միջին հայերենի ու մասամբ գրարարի) ազդեցության արդյունք պետք է համարել (այս դեպքում ևս Թփղիսի բարբառի ազդեցությունը բացառվում է):

Վերը բերված բոլոր բայերն էլ գրաբարում և լծորդության են, ուստի և ներկայի եզակի երրորդ դեմքում ունենում են է դիմանիշ, որը մեծ մասամբ

պահպանված է «Արհեստի» աշխարհաբար խոսքի ձևերում. մի երկու դեպքում միայն է դիմանիշը փոխարինված է արևելյան բարբառներին հատուկ ի-ով.

15) էական բայի ներկա եղակի առաջին դեմքը (նաև օժանդակ բայի դերում) միշտ ունի է ձևը («առաջին տեղն է», «ձախ կողմն է» (2), «հեշտ է» (22), «պարշեր է» և այլն): Սա համապատասխանությունն է գրաբարի, միջին հայերենի և արևմտահայ բարբառների ու ժողովրդախոսակցականի հետ: (Համապատասխանությունը նաև Թփղիսի բարբառի միևնույն է-ի հետ տվյալ դեպքում անկարևոր է, քանի որ նրա գերը «Արհեստի» լեզվում այս դեպքում էլ բացառված է):

16) վաղակատար ժամանակների ձևերը կազմվում են եր վերջույթ ունեցող դերբայական տարբերակով, ինչպես՝ «ուրեմն շիտակ էինք բարդեր» (14), «շիտակ եմք բազմացուցեր» (42), «ինչպես որ ասեր ենք» (88), «վեց ոսկի է խաբձեր» (112), «քանի տրամով որ պարշեր է» (133), «այսպես էինք պարշեր» (138) և այլն: Այս ձևերի բացարձակ գերակշռության մեջ միայն երբեմն հանդիպում են ել վերջույթ ունեցող դերբայով համադրված ձևեր, օրինակ՝ մի քանի անգամ գործածված է «հարիւր ոսկի էինք պարշել» կապակցությունը (128, 130, 132):

Վաղակատար ժամանակների եր վերջույթ ունեցող դերբայի բացարձակ գերակշռությունը «Արհեստի» լեզվում համապատասխանությունն է միջին հայերենի և արևմտահայ բարբառների հետ:

Եր-ով վաղակատարի ամենավաղ գործածությունները վկայված են միջին հայերենի բնագրերում (եյ-ով վաղակատարին զուգահեռ): Ուրեմն, ըստ աղբյուրների, այն նախ միջին հայերենի հատկանիշ է (եյ-ով տարբերակի զուգահեռ առկայությունը չի բացառում այդ իրողությունը): Բայց ընդհանրապես եր-ով վաղակատարը բնորոշ է արևմտահայ բարբառներին (որոնցից էլ, հավանաբար, մտել է միջին հայերենի մեջ): Մեզ հասած վիճակով էլ արևմտահայ բարբառները հատկանշվում են եր-ով վաղակատար ունենալու փաստով. այդպիսի վաղակատար ունեն Կարնո, Մշո, Խարբերդի, Երզնկայի, Շապին-Գարահիսարի, Արաբկիրի, Ակնա, Սեբաստիայի, Եվդոկիայի, Զմյուռնիայի, Նիկոմիդիայի, Կ. Պոլսի, Ռոտոսթոյի¹⁴ և այլ արևմտյան բարբառներ, իսկ վաղակատար ժամանակների ել վերջույթով ձևը հատուկ է արարատյան, Նոր Զուղայի, Աստրախանի բարբառներին, մասամբ Ագուլիսի բարբառին, ինչպես և Արցախի բարբառի մի շարք խոսվածքների: Այսինքն՝ եյ-ով վաղակատարի առկայությունը արևելյան մի շարք բարբառների առանձնահատկությունն է: Ընդ որում, եյ-ով վաղակատարի մոտ տարբերակը՝ ալ-ով վաղակատարը (աեսալ ա) նույնպես հատուկ է արևելյան բարբառներին (Արցախի, Շամախու, Ագուլիսի, Մեղրու և այլն)¹⁵:

Կարելի էր ասել լ վերջույթ ունեցող վաղակատարները հատուկ են արևելյան, իսկ Ե ունեցողները՝ արևմտյան բարբառներին, եթե չլիներ իլ-ով և իր-ով վաղակատարների՝ այդպիսի բաժանմանը չհամապատասխանող տարածումը՝ առաջինը հատուկ է ոչ միայն Թփղիսի, այլ նաև Արդվինի, Ն. Նախիջևանի, Սուշավայի բարբառներին, իսկ երկրորդը՝ մի կողմից արևմտյան Տիգրանակերտի,

¹⁴ Հմմտ. Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953, էջ 177—192:

¹⁵ Նույն տեղում:

դմադէմ լինի» (18), «էս երկու թվի տակն մին խազ պիտի քաշած և պզտիկ թիվն մեծէն դուրս հանած և մնացածն խաղի տակն գրած» (18), «պիտի երկրորդ դրի տակն գրած» (53), «էն ժուկն պիտի գրած երկրորդ գրի տակն» (53), «կտրատած թիվն ինչպես պիտի բաշղած» (81), «սաղ թիվն կտրատած թուով պիտի բաժանած» (97), «գերրորդն էլ դիան պիտի շինած» (108), «պիտի առաջինն էլ ամիս շինած» (107), «պիտի յառաջ դամէնու մայեն մին տեղ համարած»¹⁹ և դրած առաջին տեղն» (116) և այլն:

«Արհեստում» կան նույնիսկ գլուխների վերնագրեր այս բնույթի կապակցություններով արտահայտված՝ «կտրատած թիվն ինչպէս պիտի հանած» (86), «կտրատած թիվն ինչպես պիտի բազմացուցած» (91), «կտրատած թիւն ինչպէս պիտի բաժանած» (96):

Հարակատար դերբայի այսպիսի օգտագործումները, մեր կարծիքով, արեւելահայ որոշ խոսվածքների ազդեցության արդյունք են²⁰, գլխավորապես Ն. Զուղա—Երևան—Արցախ շարքի բարբառներին:

20) «Արհեստի» շարահյուսական առանձնահատկություններից նշելի է նաև ուզել բայի եղանակային-դիմավոր ձևերի հետ լրացում բայի դիմավոր ձևի կապակցվելը, որ առավելապես հատուկ է արեւելահայ մի շարք բարբառներին. օրինակ՝ «կուզենք իմանամք» (35), «ուզեն իմանան» (117), «կուզէ իմանայ» (125), «մին մարգ մի կուզէ ոսկի ծախէ Աճաճստան և կուզէ իմանայ թէ իւր բովանդակ ոսկին սրչափ թուման և որչափ դիան կանէ» (135) և այլն.

Այդ կապակցությունների գերակշռության մեջ միայն մի երկու դեպքում է ուզել բայի դիմավոր ձևը կապվում անորոշ դերբայի ուղիղ ձևի հետ (ուղիղ խնդիր), ինչպես, օրինակ, «յետոյ ուզեն իմանալ» (116):

Բերված օրինակներում (երեքի մեջ) թեև ներկան կ-ով է կազմված, այսինքն՝ արեւելյան բարբառներին ոչ հատկանշական ձևով, բայց եղանակային-դիմավոր բայ-ի դիմավոր բայ կաղապարն առավելապես արեւելյան մի շարք բարբառների (Երևան, Արցախ-Ջանգեղուր, Ն. Զուղա և այլն) շատ ամրացած հատկանիշ է, արեւմտյան բարբառներում նույնպես այն հանդիպում է, բայց ավելի պակաս կայունությամբ:

Այս 20 կետերում նշված հատկանիշները «Արհեստի» լեզվի համար պայմանականորեն համարելով գլխավոր, նույն պայմանականությամբ լրացուցիչ հատկանիշներ ենք համարում հետևյալները: Մի շարք դեպքերում գործածվում են անհամապատասխան բայի անցյալ կատարյալի հիմքից կազմված ձևերը անել իմաստով, ինչպես՝ «չորս բաժին արարինք» (9), «ինչ շահ կամ զարար են արարեր» (116) և այլն (հիշենք, որ այս հատկանիշը նոր գրական լեզվում պահպանվեց մինչև XIX դ. երկրորդ կեսը): Գրքում դրանց զուգահեռ գործածված է նաև ժողովրդախոսակցական անել ձևը («որչափ դիան կանէ» (135):

«Արհեստում» իբրև որոշիչ հոգ գրաբարյան ավանդույթով գործածվում է ն-ն, որի ը ժողովրդա-բարբառային տարբերակը չկա:

¹⁹ Բնագրում՝ ճամարած:

²⁰ Հայոց բարբառներին նվիրված աշխատություններում մենք չգտանք պիտի եղանակիչի (կամ նրա որևէ տարբերակի) ու հարակատար դերբայի նման կապակցություններ, թեև հարակատարի գործածության այդ կառուցվածքներին նմանվող դեպքերի կարելի է հանդիպել Արցախի ու Ջանգեղուրի, ինչպես և մասամբ արարատյան որոշ խոսվածքներում, ամենից ավելի Ն. Զուղայի բարբառում:

Այնուհետև, մարդ բառը շատ է գործածված, բայց հոգնակիի ոչ մի ձև չկա: Եզակին սեռական-տրական հոլովում սովորաբար լինում է մարդի (119), բայց կա նաև մարդու (119) ձևը:

Գործածված է տալ բայի տվա կատարյալի ձևը (սմին մարդ մի իւր փողն շահով տվաւ (125): Գտնել բայի ն ածանցը ընկնում է ներկա-ըղձական հիմքում (սմէկ բաժանող մի մին բաժանելու թվի մէջն կու գտվի): Ինն բառը թեքվելիս հնչյունափոխվում է (ըննի, ըննում—տե՛ս վերը բերված օրինակները):

Նշենք մի երկու ուղղագրական հատկանիշ. վ-ի և լ-ի ուղղագրությունն անկանոն է, որ հատկապես նկատվում է թիւ բառի գրություններում (տե՛ս վերը բերված օրինակները): Հինգ բառը միշտ գրվում է ճիճկ, վաթսուներ՝ վացուն:

Հանրագումարի բերելով «Արհեստի» լեզվի թվարկված հատկանիշները՝ պարզում ենք, որ ըստ 20 գլխավոր կետերի (հատկանիշների) այդ լեզուն աշխարհաբարն է, ժամանակակից գրական հայերենի՝ XVII դ. երկրորդ կեսում գործածված տարբերակը: 20 կետերից միայն երկուսում՝ 3-րդի (դերանունների մի քանի ձևեր ու վերայ կապը) և 13-րդի (մ բայական մասնիկի բացարձակ գերակշռությունը ն-ի նկատմամբ՝ գրեմք-գրեմք) դեպքերում ունենք գրաբարյան ձևերի գերակշռություն, մյուսներում բացարձակորեն գերիշխում են աշխարհաբարյան ձևերը: Երեք կետերի դեպքում՝ 9-րդ (բացառականի կազմությունը), 14-րդ (կուգէ, գնէ, կաճէ ձևերի գերակշռությունը), 15-րդ (էական բայի եզակի երրորդ դեմքի է ձևի մենաշնորհ), գրաբարյան ու միջին հայերենի ձևերի ընդհանրությունը համընկնում է ժողովրդաբարբառային (գերազանցապես արևմտյան) ձևերի հետ, որոնք և աշխարհաբարյան են: Կետերից երեքում՝ 12-րդ (ներկայի կու-ով կազմությունը), 16-րդ (վաղակատար ժամանակների կազմությունը), 17-րդ (ներկայի ժխտական ձևերի կազմությունը) լիովին կամ մասամբ համընկնում են միջին հայերենի և ժողովրդաբարբառային հայերենի (արևմտյան) առանձնահատկությունները:

Արևմտահայ թե արևելահայ հակումների տեսանկյունից «Արհեստի» լեզվի այս հատկանիշները հետևյալ բաժանումն ունեն: Կետերից 7-ում բացարձակ կամ մասնակի գերակշռությունը արևելահայ բարբառներինն է (և ժողովրդախոսակցականինը). դրանք են՝ 1-ին (բառաձևեր), 2-րդ (բարբառային բառեր), 6-րդ (հոգնակի սեռական-տրական հոլով), 8-րդ (ներգոյական), 18-րդ (պիտի-պիտիեմք—անորոշ դերբայ կապակցություն), 19-րդ (պիտի—հարակատար դերբայ կապակցություն), 20-րդ (ուգել բայի եղանակա-դիմավոր ձևեր—այլ բայերի դիմավոր ձևեր կապակցություն):

Կետերից 6-ում գերակշռությունը արևմտահայ բարբառներինն է (ու ժողովրդախոսակցականինը): Դրանք են. 9 (բացառականի ձևերի հիմնական մասը), 12 (ներկայի կազմությունը), 14 (ներկայի և ըղձական ապառնու եզակի երրորդ դեմքի ձևերում է դիմանիշի գործածության գերակշռությունը), 15 (էական բայի ներկա եզակի երրորդ դեմքի է ձևի մենաշնորհ), 16 (վաղակատար ժամանակների ձևերը), 17 (ներկայի ժխտական ձևերը): Այս կետերից երեքը (9, 14, 15) արևմտահայ խոսքի հատկանիշներ լինելով, ինչպես վերև ասվեց, միաժամանակ գրաբարին ու միջին հայերենին են հատուկ, իսկ արևմտահայ բարբառներին (ու ժողովրդախոսակցականին) բնորոշ մյուս երեք կետերը (12, 16, 17) հատուկ են նաև միջին հայերենին:

10-րդ կեսում (ն հոգի գործածության 3 դեպքերը) հավանաբար արևմտահայ և արևելահայ բարբառների հատկանիշները հավասարակշռվում են:

Այսպիսով, աշխարհաբար առաջին տպագիր գրքի ուշադրության առնված հատկանիշները ցույց են տալիս, որ XVII դ. երկրորդ կեսին հայ նոր գրական լեզուն համակարգային դառնալու նկատելի հակումներ է ցուցաբերել, յոթագրվել են կանոնի որոշ սահմաններ, թեև համակարգի չեզոք զուգահեռականությունները բավական շատ են: Զուտ գրաբարյան (միայն գրաբարին հատուկ) ձևերը քիչ են, իշխում են ժողովրդաբարբառային լեզվամիջոցները և, իհարկե, լեզվի քերականական տրամաբանական հիմքը լիովին ժողովրդաբարբառայինն է, այսինքն՝ աշխարհաբարյանը:

Լեզուն ունի թե՛ արևմտահայ, թե՛ արևելահայ բարբառների առանձնահատկություններ, այն միասնակցան աշխարհաբար է, չկա առեկտանայ-առեկտանայ բաժանումը: Ընդ որում, արևմտահայ խոսքի տարրերի կշիռը արեւելահայ տարրերին մոտավորապես հավասարվում է գրաբարյան և միջին հայերենի այն լեզվամիջոցների առկայության շնորհիվ, որոնք միաժամանակ արևմտահայ ժողովրդաբարբառային են:

Արևելյան մի շարք բարբառներում առկա ա-ով բացառականը (ֆեզանայ, ֆևանայ և այլն) թեև է-ով բացառականի տարբերակն է, բայց շատ հեռացած նրանից, արևելյան բարբառների ուժեղ երանգով:

Ն. Զուղայի բարբառին հատուկ է-ով բացառականը, նշեցինք, որ շատ թույլ է արտահայտված, իսկ եթե այն որևէ դեր կատարել է «Արհեստի» լեզվում, ապա դարձյալ իբրև արևմտահայ խոսքի «ներկայացուցիչ» և դարձյալ նպաստել է աշխարհաբարի միասնականացմանը:

Կա Հ. Աճառյանի ուշագրավ կարծիքը, ըստ որի արևելյան և արևմտյան հայոց բարբառներում ներկայի (և անցյալ անկատարի) կազմությունները մի ժամանակ նույնն են եղել (բոլորն էլ կու, կ եղանակիչով համադրական ձևեր)²¹, որ մեկն է այն փաստարկներից, ըստ որոնց սխալ է միայն բայի ներկա ժամանակի կազմությամբ որոշել վաղ աշխարհաբարյան բնագրերի լեզվի արևմտահայ թե արևելահայ հակումը:

Ներկա քննության ամենակարևոր արդյունքն այն իրողության պարզումն է, որ վաղ աշխարհաբարի մի բնորոշ նմուշ «Արհեստ համարողութեան» գրքի լեզուն միաժամանակ և՛ արևելահայ է, և՛ արևմտահայ, չկա նոր գրական լեզվի մեզ ծանոթ երկփեղկումը:

Միևնույն 20 բաղադրիչների օգնությամբ մենք քննել ենք վերը հիշված վաղ աշխարհաբարյան հուշարձաններից նաև «Արհեստ թվական է սայ» և «Պարզաբանութիւն հոգեհոգ սաղմոսացն» բնագրերի լեզուն: Յուրաքանչյուրն ունի լեզվական ու ոճական մի շարք առանձնահատկություններ, սակայն արևելահայ և արևմտահայ լեզվամիջոցների հարաբերակցությունը նրանցում էլ հիմնականում համընկնում է «Արհեստի» լեզվին²²: Այս նույն հատկանիշն ունի նաև Զաքարիա Ազուլեցու Օրագրության լեզուն:

21 Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, հ. IV, Գիրք Բ, Երևան, 1961, էջ 75, 87:

22 Յուրաքանչյուրի լեզվից բերում ենք մեկական հատված. «Մէկ մարդ մի մշակ բռնեց միջև իմ օր ասաց, թէ յառաջի օրն Ա ըստակ կուտամ, երկրորդն Բ, երրորդն Գ ըստակ, չորրորդն Դ. ամենայն օր մի մի աւելացնեմ, որչափ որ կենաս ի քովս: Եւ նա կեցաւ ի նորայ

Այս հանգամանքը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ XVII դ. վաղ աշխարհարարը ընդհանուր առմամբ եղել է միասնական, առանց արևմտահայ-արևելահայ բաժանման: Միաժամանակ, աշխարհաբարյան հետագա բնագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ակնհայտ երկրիեղկումը կատարվել է XVIII դ. սկզբներին՝ նոր գրական լեզվի վրա մի դեպքում արեւելյան, մյուս դեպքում արեւմտյան բարբառների և ամենից ավելի արարատյան ու Կ. Պոլսի բարբառների ուժեղացող ազդեցության շնորհիվ: XVIII դ. արևելյան աշխարհաբարի ամենավաղ ու բնորոշ նմուշներից և նրա առաջին քերականական նկարագրությունը գտնում ենք Յ. Շրյոդերի «Արամեան լեզուին դանձ» գրքում (Ամստերդամ, 1711), իսկ գրական արևմտահայերենի ամենավաղ և բնորոշ նմուշներից, ինչպես և նրա քերականությունը տեղ են գտել Մխիթար Սեբաստացու «Դուռն քերականութեան աշխարհաբառ լեզուին հայոց» (Վենետիկ, 1727) գրքում:

ЕДИНЫЙ АШХАРАБАР XVII ВЕКА

Р. А. ИШХАНЫН

Р е з ю м е

Согласно сохранившимся письменным памятникам, новый армянский литературный язык—ашхарабар стал применяться с середины XVII в. Об этом свидетельствует, например, язык одного из интересных памятников ашхарабара XVII в.—книги «Искусство вычисления» (Марсель, 1675). Это небольшое пособие (переводное) по арифметике, изданное для армянских купцов. Оно является также первой печатной книгой на ашхарабаре. Язык книги можно анализировать посредством 20 языковых элементов-признаков, которые условно названы главными. Выделены также некоторые другие элементы, условно названные второстепенными. В языке книги «Искусство вычисления» имеется приблизительное равновесие характерных элементов восточных и западных армянских диалектов, т. е. язык книги является единым ашхарабаром (не западным и не восточным). Как этот, так и другие памятники ашхарабара XVII в. приводят к выводу, что в период своего формирования новоармянский литературный язык был единым и что его разветвление на два варианта—восточный и западный—в основном произошло в начале XVIII в. благодаря усилению влияния, с одной стороны, восточных, с другой—западных армянских диалектов.

մոտ 24 օր: Ընդ ամենն քանի ըստակ պիտի լինի» («Արհեստ թվական է սայ», Մատենադարան, նշվ. ձեռ., էջ 42ա): Երրորդ դաս սաղմոսն ինքն Դաւիթ է ասացեր: Այս սաղմոսում կու մխիթարէ մարգարէն բարի և խեղճ մարդիքն, որ երբոր կու տեսանեն շար մարդկանց ողջութիւնն շի յուսահատին» («Պարզաբանութիւն», էջ 185):